ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/02» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով գնահատող հանձնաժողովի նիստի (Հայտերի գնահատման նիստի արձանագրություն)

ք. Երևան

10.11.2021թ.
Ժամը՝ 16:00-ին

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ *Հայկ Խուրշուդյան*

Անդամներ՝ *Լևոն Մուրադյան*
Արման Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ *Հասմիկ Ղազարյան*

Օրակարգ՝

1. **ԷԱ ընթացակարգի հայտերի գնահատման մասին.**

1.1 Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության 2022 թվականի կարիքների բավարարման համար՝ **վարչական սարքավորումների** ձեռքբերման նպատակով **«ՊՎԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/02»** ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է 2021 թվականի նոյեմբերի 4-ը, ժամը 15:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2021 թվականի նոյեմբերի 5-ին, ժամը 15:00-ին՝ http://www.eauction.am/ էլեկտրոնային կայքով:

1.2 http://www.eauction.am/ էլեկտրոնային կայքով հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակցի անվանումը	Էլ. հասցե
1	«Կոմպգարանտ» ՍՊԸ	info@compgarant.am
2	«Լեմուր» ՍՊԸ	vartanovtig@gmail.com

2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը ներկայացված են, էլեկտրոնային եղանակով ստորագրված են մասնակիցների կողմից:

3. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված հրավերի պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

3.1 Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին

համապատասխան:

4. Տեղեկություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ.

4.1 Հայտի փոփոխություններ, հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված հրավերի պայմաններին կազմված լինելու մասին.

5.1 Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից «Կոմպգարանտ» ՍՊԸ-ի փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջներին, մասնավորապես Հավելված 1.1-ում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր).

. 1-ին չափաբաժնով ներկայացված ֆիրմայի անվանման, ապրանքային նշանի և արտադրողի անվանման սյունակներում նշված են մեկից ավելի անվանումներ, իսկ «մակնիշը» սյունակում նշված է գնման առարկայի անվանումը:

. 1-ին չափաբաժնով ներկայացված տեխնիկական բնութագրում բացակայում է հրավերով պահանջվող լիցենզիայի առկայության, մարտկոցով աշխատանքի ժամանակի տևողության, ինչպես նաև երաշխիքային ժամկետի վերաբերյալ տեղեկատվությունը:

. 2-րդ չափաբաժնով ներկայացված ֆիրմայի անվանման, ապրանքային նշանի և արտադրողի անվանման սյունակներում համապատասխան տեղեկությունների փոխարեն նշված է առաջարկվող ապրանքի պրոցեսորի հզորությունը:

. 4-րդ չափաբաժնով ներկայացված ֆիրմայի անվանման սյունակում նշված են մեկից ավելի ֆիրմային անվանումներ, իսկ ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի անվանման սյունակներներում նշված է առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը:

. 4-րդ չափաբաժնով ներկայացված տեխնիկական բնութագիրում չափսերը լրացված է ոչ հստակ՝ նշված է տիրույթ:

5.2 Համաձայն ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը որոշեց.

- Մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը.
- Համակարգի միջոցով ծանուցել «Կոմպգարանտ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը (ս.թ. նոյեմբերի 10-ը ժամը 16:00-ն) շտկել անհամապատասխանությունները:

6. Տվյալներ մասնակցի սահմանված հրավերի պայմաններին համապատասխան ներկայացրած շտկված փաստաթղթերի վերաբերյալ:

6.1 «Կոմպգարանտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են փաստաթղթերի շտկված տարբերակները:

7. Տվյալներ մասնակիցների կողմից առաջարկած գների վերաբերյալ.

ՀՀ դրամ.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Մասնակից	Նախահաշվային գին	Առաջարկած գին		
				Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1.	Դյուրակիր համակարգիչներ	«Կոմպգարանտ» ՍՊԸ	0	3000 000	600 000	3 600 000
2.	Սեղանի համակարգիչներ			900 000	180 000	1080 000
4	Տեղեկությունների պահպանման կրիչներ			133 000	26 000	159 600
6	Չիրկիզվող պահարաններ	«Լեմուր» ՍՊԸ	0	817 000	163 400	980 400

8. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.

Մասնակցի զբաղեցրած տեղը	Մասնակցի տվյալները	Չափաբաժինը
1	«Կոմպգարանտ» ՍՊԸ	1,2,4
1	«Լեմուր» ՍՊԸ	6

Ուսումասիրելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները և հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները, Հանձնաժողովը որոշեց.

- **«Կոմպգարանտ» ՍՊԸ-ին 1,2 և 4-րդ չափաբաժիններով ճանաչել ընտրված մասնակից:**
- **«Լեմուր» ՍՊԸ-ին 6-րդ չափաբաժնով:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Հայկ Խուրշուդյան

Անդամներ՝ ---------- Լևոն Մուրադյան

---------- Արման Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Հասմիկ Ղազարյան